

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

Պարմական գիյր. դոկտոր

ՆՔԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՅՈՒ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նայ մարմնագրության հայրնի դեմքերից է իշխան Նեթում Կոթիկոսցին, որը հայ պարմագրության մեջ հայրնի է Նեթում Պարմիչ, իսկ երոպականում՝ Նայթոն Նայ անունով (Hayton l'Arménien): Նա Կիլիկիա Նեթում Ա (1226-1269) թագավորի եղբայր Օշին պայլի որդին էր, րերը Կոթիկոս նշանավոր բերդաքաղաքի և այլ ամրոցների, եղել է պերական բարձր պաշտոններում: Նեթում Կոթիկոսցին ծնվել է մոտավորապես 1240-ական թվականներին, 1280-90 թթ. շրջանում ամուսնացել է Զարելի (Զարբուն) հետ, ունեցել զավակներ (որոնք հերագայում նշանավոր պերական գործիչներ են դարձել), մահացել է 1316 թվականից հետո (մինչև 1320 թվականը)¹:

Նեթում Կոթիկոսցին 1293-1296 թթ. ժամանակամիջոցում գրել է մի շարք աշխատություններ, որոնցից են Ռուբիկյաններին, Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորներին և Անրիոթի իշխաններին նվիրված ազգաբանական փոքրածավալ երկերը, Ֆրանսագիր հեղինակների գործերից թարգմանած ժամանակագրությունը՝ «Պարմություն խրոնիկոնին, գոր նըասար ծառայս Քրիստոսի Նեթումս րեր Կոթիկոսայ փոխեցի ի Ֆռանգ գրոց ի թուին Նայոց Չես (1296)» և րարեր աղբյուրներից հավաքած ու կազմած ժամանակագրությունը՝ «Համաոսր պարմություն ժամանակաց հաւաքեալ ի գանազան պարմութեանց, այսինքն՝ ի Նայոց, ի Ֆռանկաց, ի Յունաց, ի յԱտրոց գրեանց, աշխարութեամբ իմոյ՝ ծառայիս Քրիստոսի Աստուծոյ Նեթոյ, րեանն Կոթիկոսայ, ի թվականիս Նայոց Չես (1296)»²:

1305 թ. Կիպրոս րեղավոխված և լարինական միաբանության անդամ դարձած Նեթումը, 1307 թ. որպես իր բարեկամ և Կիպրոսի կառավարիչ Ամորիի պարգամախոս, Ֆրանսիա մեկնելով, հանդիպել է Նոմի Կոեմես Ե (1305-1314) պապին և նրա հանձնարարությամբ պարրասրել «Շաղիկ Արեւելյան երկրների պարմության»³ երկը:

1 Նեթում Կոթիկոսցուն նվիրված առայժմ առավել ամբողջական ուսումնասիրության հեղինակ Կոդ-Արմեն Մոթաֆյանը մանրամասնորեն անդրադարձել է նրա ծագմանը, կենսագրությանն ու գործունեությանը (**Claude Mutaşian**, Héthoum de Korykos historien arménien un prince cosmopolite a l'aube du XIV^e siècle, "Cahiers de recherches médiévales" No. 1, Orléans, 1996, p.157-174):

2 «Մանր ժամանակագրություններ», 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Նակոբյան, Եր., 1951, էջ 37-80 (այսուհետքն՝ ՄԺ, հ. 1), «Մանր ժամանակագրություններ», 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Նակոբյան, Եր., 1956, էջ 33-114 (այսուհետքն՝ ՄԺ, հ. 2): «Համաոսր պարմություն ժամանակաց...» ժամանակագրությունը Վ. Նակոբյանը վերագրել է Նեթում Բ թագավորին, սակայն իրականում հեղինակը Նեթում Կոթիկոսցին է: Այս մասին հանգամանորեն րեն **Կ. Մաթևոսյան**, Նեթում Կոթիկոսցու ժամանակագրությունը և նորահայր ժամանակագրական լրացումները, Լ. Խաչիկյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը, Եր., 2010, էջ 119-149: Ժամանակագրության հնագույն 1319 թ. ընդօրինակությունից կարարված հրարարակությունը րեն «Նկարագիր Օշին թագավորի ձեռագիր ժամագրքին», 1319, նկարագրեց Արարազդ արքեպիսկոպոս, Անթիլիաս, 1933, էջ 93-101:

3 Նայ հեղինակները երբեմն վերնագրում օգրագործում են «ճաղկաքաղ» բառը: Երկի Ֆրանսերեն անվանումն է "La Fleur des Histoires de la terre d'Orient", բայց հայրնի է նաև "L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nommé le grand Can" անունով, որից էլ հայ պարմագրության մեջ հաճախ կոչվում է «Պարմություն Թարարաց»:

Ներքոմն այն թելադրել է հին ֆրանսերենով, որը գրի է առել Նիկոլաս Ֆալկոնը, ապա և անմիջապես թարգմանել լատիներեն, որից հետո Կոռիկոսցին երկը հանձնել է Հոմի պապին: Ուսումնասիրողները բարձր են գնահատել Ներքոմ Կոռիկոսցու այս երկը և անգամ համեմատել Մարկո Պոլոյի ու այլոց՝ նույն ժամանակաշրջանում գրած ուղեգրությունների հետ⁴: Իսկ Ֆ. Ֆելդին Ներքոմին համարելով ֆրանսերենով սրելոձագործած առաջին հայը, նշում է, որ եթե մյուսները Արևելք եկած ճանապարհորդներ էին, ապա նա բուն արևելցի էր, հայ մարդ, որը թե՛ իր ծագումով, թե՛ գործունեության դիվանագիտական ասպարեզով մասնագիտական երաշխավորն էր իր գրածի⁵:

Ներքոմ Կոռիկոսցու կենսագրության մանրամասները և պարմագրական հարուստ ժառանգությունն արժանացել են հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությանը: Բոլորովին վերջերս մենք ևս առիթ ունեցանք անդրադառնալու այս հեղինակին, մասնավորապես նրա ժամանակագրությանը («Նամառսը պարմութին ժամանակաց հառաքեալ ի զանազան պարմութեանց...») և այն ժամանակագրական լրացումներին, որոնք, բաղված լինելով Կոռիկոսցու գործերից, ներմուծվել են ԺԲ դարի հեղինակ Սամվել Անեցու «Նաւաքմունք ի գրոց պարմագրաց...» ժամանակագրության մեջ⁶: Սպորեւ առաջին անգամ հրապարակում ենք այդ լրացումները որպես առանձին բնագիր: Սակայն նախ համառոտակի ծանոթանանք այդ բնագիրը պահպանած ձեռագրին և փորձենք պարզել մարյանի սրելոձման հանգամանքները:

Մարենադարանի թիվ 1898 ձեռագիրը (այսուհետև՝ Մ՝ 1898) մի արժեքավոր Ժողովածու է, որի գլխավոր հիշարակարանի բացակայության պարճառով գրչության հանգամանքներն անհայտ են⁷, սակայն դարելով մագաղաթից, գրչությունից, պարունակած նյութերից, ակնհայտորեն սրելոձված է Կիլիկիայում: Մարենադարա-

4 Ներքոմ Կոռիկոսցու պարմությունը Փարիզում առաջին անգամ տպագրվել է 1517 թ., այնուհետև՝ 1529 և 1735 թթ., իսկ համեմատական բնագիրը Ֆրանսիական ակադեմիան հրապարակել է 1906-ին (**Hayton**, La Fleur des Histoires de la terre d'Orient, "Recueil des historiens des Croisades" Documents Armeniens, t II, Paris, 1906, p. 110-254), վերահրապարակվել է 2002-ին: Լատիներեն տպվել է 1529, 1532, 1555, 1585, 1671 թթ., իտալերեն՝ 1535, 1559 թթ., հոլանդերեն՝ 1664, տպագրվել է նաև անգլերեն, գերմաներեն, իսպաներեն (տե՛ս Ն. Աճառյան, Նայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 74-75, **Ֆ. Ֆելդի**, Ներքոմ Պարմիչ հեղինակ «Ծաղիկ պարմութեանց Արևելեան Աշխարհի» գրքին, Փարիզ, 1939, էջ 8, **Լ. Բաբայան**, Դավազներ Նայասարանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պարմագրության, Եր., 1981, էջ 338, 390): Նայերեն (գրաբար) թարգմանվել է ոչ ամբողջովին (տե՛ս «Ներքոմ պարմիչ թարգարաց», յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Ն. Մկրտիչ վարդապետի Ազգերեան, Վենետիկ, 1842): Վենետիկյան թարգմանությունից դուրս մնացած մի քանի հատված տե՛ս **Ա. Ազիզյան**, Նախածաներ Ներքոմ պարմիչի «Արևելքի երկրների պարմության ծաղկաբաղ»-ից, «Բանբեր Երեսանի համալսարանի», Եր., 2003, թ. 3, էջ 99-106:

5 **Ֆ. Ֆելդի**, Ներքոմ Պարմիչ... էջ 7: Ներքոմ Կոռիկոսցու պարմությունը բացկացած է չորս մասից, առաջինը ներկայացնում է Արևելքի 14 երկրներն ու ժողովուրդները համառոտ բնութագրումներով, երկրորդ մասում խոսվում է այն ինքնակալների մասին, որոնք իշխել են Ասիայում -Բիսպոսի ծնունդից ի վեր, երրորդ մասը թաթարների պարմությունն է (ծագումը, նվաճումները, պետությունը և այլն), չորրորդ մասը՝ դեպի Մուրբ Երկիր խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու մանրամասն մշակված ծրագիր է: Այս մասին ակադեմիկոս Աշ. Նովիանինյանը գրում է. «Ներքոմի բուն աշխատությունը... խաչակրաց նոր արշավանքի ռազմաքաղաքական մի ծրագիր էր, որը Վենետիկի հայերեն թարգմանության մեջ դուրս է ձգված» (**Ա. Նովիանինյան**, Դավազներ հայ ազատագրական մարքի պարմության, գիրք Ա, Եր., 1957, էջ 175, տե՛ս նաև **Մ. Զուլպյան**, Նայ ժողովրդի 13-18-րդ դարերի պարմության հարցերը ըստ երոսպացի հեղինակների, գիրք Ա, Եր., 1990, էջ 77):

6 Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 119-149:

7 Ձեռագիրը գրված է նուրբ մագաղաթի վրա, բոլորգրով (թերթ 280, 23,5x17,5սմ): Ժամանակագրությունը սկսվում է կիսախորանով և գլխագրով (թերթ 6ա):

նի ձեռագրացուցակում համարվում է ԺԳ դարի մաքյան⁸: Քանի որ ձեռագրում Սամվել Անեցու Ժամանակագրությունը շարունակված է մինչև 1294 թ., ձեռագրի հաջորդ նյութը՝ Ներում Կոռիկոսցու 1296-ին թարգմանած «Պարմություն խրոնիկոնին» գործն է, իսկ մյուս նյութերում եղած թվականները չեն հասնում ԺԳ դար, կարելի է ենթադրել, որ ձեռագիրը գրվել է ԺԳ դարի վերջին տարիներին:

Մաքյանի առաջին նյութը Սամվել Անեցու Ժամանակագրությունն է (թերթ 6ա-96բ), որի առաջին մասը՝ Ադամից Քրիստոս, ամբողջական է⁹, սակայն աղյուսակավոր երկրորդ մասը (32ա թերթից)՝ Քրիստոսի ծնունդից մինչև 1294 թ., ամբողջովին խմբագրված է, ընդ որում կատարված փոփոխություններն այնքան հիմնավոր են, որ կարելի է ասել, հեղինակը Սամվել Անեցու Ժամանակագրությունից վերցրել է միայն արտաքին ձևը, իսկ մնացածը կառուցել է իր հայեցողությամբ: Կատարված հիմնական փոփոխություններն են՝ ա. էջերի կենտրոնում գրվող ժամանակագրական ուղղահայաց թվաշարքի սյունակների թիվն ավելացված է մեկով, որը հատկացված է Հռոմի պապերին, բ. Ժամանակագրական թվաշարքի սյունակների վերնամասում, ի տարբերություն Սամվել Անեցու Ժամանակագրության¹⁰, չի նշվում որևէ գահակալի անուն, այլ հաջորդաբար՝ «Ի Քրիստոս սկսեալ», «Պապ Հռոմայ», «Կայսր Հռոմայ» և այլն, իսկ գահակալների անունները և տարիների քանակը գրված են պարմական վկայությունների համար նախատեսված կողային սյունակներում, գ. Ժամանակագրության Հայոց թվականի առաջին տարին դրված է Փրկչական ՇԾԲ (552) թվականի դիմաց (59բ), ի տարբերություն Սամվել Անեցու բնագրի, ուր 554 թվականի դիմաց է: Այսինքն Փրկչական և Հայոց թվականները նույնական են, ընդ որում Փրկչականը ոչ թե «հայկական քրիստոնեական» է (2 տարով ավելի), ի տարբերություն Սամվել Անեցու¹¹, այլ մեր արդի թվականը, դ. առաջին մի քանի էջերից հետո Սամվել Անեցու Ժամանակագրությունից խիստ սակավաթիվ տեղեկություններ են ընդօրինակված, դրա փոխարեն ավելացված են Կիլիկիային և խաչակիրների պետություններին վերաբերող, Ներում Կոռիկոսցու երկերից բաղված բազմաթիվ հակիրճ տեղեկություններ:

Ինչպես տեսնում ենք, այս մաքյանում մենք ունենք ոչ թե ժամանակագրության սովորական խմաստով ընդօրինակություն, այլ խմբագրված և նոր բովանդակությամբ ժամանակագրական ցանկ, սակայն Սամվել Անեցու Ժամանակագրության ձևաչափով:

Մեր նախորդ հրապարակման մեջ ցույց ենք տվել, որ այդ փոփոխությունները կարող էր կատարել կամ անձամբ Ներում Կոռիկոսցին կամ դրանք արվել են նրա

8 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարենադարանի», հ. Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, Եր., 1965, էջ 669:

9 Որոշ էջերի փողպատներում գրիչը փոքր հավելումներ ունի: Դրանցից հետաքրքրական է մեկը, որտեղ ասվում է, թե ասորվածաշնչյան Եսավից են ծագում ֆրանկները՝ «յեսաուայ են Ֆռանգը» (13բ):

10 Սամվել Անեցին Փրկչական թվականի սյունակից հետո հաջորդ սյունակների վերին մասում գրում է Հռոմեական կայսրերի և մյուս գահակալների անունները («Հռոմայեցոց Ազոստոս», «Հրեից Ներովդէս», «Պարսից Արշաիր», «Հայոց Աբգար»):

11 Լ. Խաչիկյանը և Վ. Նակոբյանը նշում են. «Սամուել Անեցին հետևել է այն սովորագրերին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ, ուստի Սամուելի... ժամանակագրության մեջ, ամենուրեք, քրիստոնեական և հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է» (Լ. Խաչիկյան, Վ. Նակոբյան, Ինչպես չպետք է հրապարակվեն պարմական սկզբնաղբյուրները, ՄՍՍՈՒ ԳԱ «Տեղեկագիր», 1949, թիվ 2, էջ 82, տես նաև Բ. Թումանյան, Տոմարի պարմություն, Եր., 1972, էջ 132):

հանձնարարությամբ¹²: Այսօր բարեբախտաբար հնարավորություն ունենք ճշգրտել Մ1898 ձեռագրի գրչի ինքնությունը: Դա Ներսիս Կոռիկոսցու՝ Վասիլ անունով դպիր-քարտուղարն է, այն մարդը, որը իշխանի պարվերով նրա համար մի Ավերաբան է ընդօրինակել 1293 թվականին (պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռ. թիվ 1250): Վերջինիս մասին այդ ձեռագրում Ներսիսի անունից գրված հիշարակարանում ասվում է. «...սրացա գսուրբ Անարարանս եւ փափագեալ սրբի բաղձանաւք երու գրել զսա իմոյ իսկ հրովարակաց դպրի՝ Վասիլ, որ երբեմն սարկաւագ լեալ՝ եւ այժմ ծառայէ ինձ միամբութեամբ եւ մտերմաբար սիրով»¹³: Հայագիտությանը միայն վերջերս հայրնի դարձած այս մեծարժեք ձեռագրի¹⁴ եւ Մ1898 մապյանի գրչության համամարտությունը, հարկապես բարդ գրությամբ տառերի (ձ, գ, ծ, ճ, ջ, չ, ֆ) նույնականությունը, ոչ մի կասկած չեն թողնում, որ դրանք նույն Վասիլ գրչին են պատկանում:

Հիշարակարանը արժեքավոր է Վասիլի անձի մասին տեղեկություններով, որը նախկինում սարկավագ է եղել, բայց հետո ծառայության է անցել Ներսիս Կոռիկոսցու մոտ, որպես նրա հրովարակները գրող քարտուղար՝ դպիր, միաժամանակ եղել է իշխանի համախոհը՝ «միամիտը» (թերևս նկարի է առնված դավանական նախընտրությունները) եւ բարեկամը: Հիշարակարանը շար կարևոր տեղեկություններ է պարունակում Ներսիս Կոռիկոսցու եւ նրա շինարարական գործունեության մասին¹⁵:

Այսպիսով ակներև է, որ Մ1898 ժողովածուն կազմվել է որոշակի ծրագրով, Ներսիս Կոռիկոսցու հանձնարարությամբ, նրա Վասիլ դպրի ձեռամբ: Ձեռագրի առաջին նյութը՝ Սամվել Անեցու Ժամանակագրությունը խմբագրվել է ըստ Ներսիս Կոռիկոսցու 1296 թ. թարգմանած «Պարամութին իրոնիկոնին» ժամանակագրության, որը նույն ձեռագրի երկրորդ նյութն է (թերթ 123ա-167բ), բայց ավելացվել են նաև մի քանի այլ տեղեկություններ: Ձեռագրի հաջորդ նյութերը նույնպես Ներսիս Կոռիկոսցուն են՝ «Պարամութին ազգին Ռովբինանց, թե որպես Կիրեցին Կիլիկիոյ» (168ա-172ա), «Ազգաբանութին թագաւորացն

12 Տե՛ս Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 141-149:

13 **Շահէ արքեպս. Աճէմնան**, Հայոց սպարապետ Ներսիս պալլի իշարակարանը. «Հայերէն Աստուածաշունչը» (հայագիտական ուսումնասիրություններ), Եր., 2006, էջ 348:

14 Նախկինում այս Ավերաբանի միայն հիշարակարանն է հայրնի եղել, որոշ կրճատումներով արագրված է 1608 թ. մի ժողովածուի մեջ (Մարենտաբան, ձեռ. 5613), որից էլ հրատարակվել է (Վ. Նսիկոսյան, Ներսիս պարամութի իշարակարանը, ՏՄՄՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, թ. 10, էջ 66-73, «Հայերէն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 717-719): Հիշարակարանի մի քանի կարևոր հարված չկա այդ հրատարակություններում: Ձեռագիրը 1990-ական թթ. պարկանել է Շահէ արքեպիսկոպոս Աճէմնանին, որն այն նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Հիշարակարանն ամբողջությամբ տեսն **Շահէ արքեպս. Աճէմնան**, նշվ. աշխ., էջ 344-351:

15 Ներսիս Կոռիկոսցու իշխանության մասին ասվում է. «...Ներսիս, որդի Աշնին՝ եղբայր Ներսիս Հայոց թագաւորի, որ եւ ես՝ Ներսիս շնորհաւոր ողորմութեանն Աստուծոյ տէր Կոռիկոսայ եւ Մանիաւնին, Պունատոյ, Անամոտին եւ Կուպային եւ այլոց ամբոցացն, որ առ կողմամբն Սալիկոյ եւ գաւառաց բերդիցն...»: Հիշարակարանում նշվում է, որ Ներսիսը թշնամական հարձակումների սաստկացման պարագայում Կոռիկոսի ափամերձ կղզու վրա ամրոց է կառուցել, որի մեջ հիմնել է եկեղեցի եւ այդ ձեռագիրը գրել է Գրիգորիայի անունով: Հիշարակարանը գրել է 1293 թ., հենց այդ ամրոցում (տեսն **Շահէ արքեպս. Աճէմնան**, նշվ. աշխ., էջ 350-351): Կոռիկոսի ծովային ամրոցում պահպանվել է Ներսիս Կոռիկոսցու արձանագրությունը, որը հայագիտությանը ցայժմ հայրնի է Վ. Լանգուայի, Դ. Ալիշանի բնութագրմամբ՝ «աղաւաղ» ընդօրինակությամբ (տեսն **Դ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 336): Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) մեզ փրամադրած լուսանկարից դարձելով արձանագրությունը սկսվում է հետևյալ կերպ. «(Ի ԹՈՒՄԿԱՄԻՆ)Ս ԱՅՈՅՈՅ ԶԱՐՄԻՆ ԵԻԹՆԱԿ(ԱՐԻԻԲ)», ցավոք փայտեղի փաստավորում ու միավորը եղծված են:

Երուսաղեմի և թագաւորացն Կիպրոսի», «Ազգաբանութիւն բրնձնոյ Անրիոքայ» (172ա-175բ): Դրանից հետո գերեզման է այլ հեղինակի՝ Միքայել Ասորու ժամանակագրութիւնը (176ա-217բ): Ուշագրաւ է, որ Միքայել Ասորու ժամանակագրութիւնը, որը սկսվում է Ադամից, այս ձեռագրում սկսվում է առաջին մասի զգալի կրճատումով, Մուհամեդի հայտնվելուց՝ «Երեսեցաւ Մահմէտ որդի Աբդլայի...» (176ա)¹⁶: Այս հանգամանքը նույնպէս ցույց է տալիս, որ Մ 1898 ժողովածուն կազմվել է նախապէս որոշված ծրագրով: Քանի որ ձեռագրի սկզբում գերեզման Սամվել Անեցու ժամանակագրութիւնը սկսվում է Ադամից և տալիս է հնագույն պատմության անհրաժեշտ տվյալները, ժողովածուն կազմողը Միքայել Ասորու ժամանակագրութիւնից դուրս է թողել սկզբի մասը: Ձեռագրի մյուս մի քանի նյութերը պատմաաշխարհագրական և տեղեկատվական բնույթ ունեն և միանգամայն համապատասխանում են Ներում Կոռնիկոսցու մատենագրական նախընտրություններին:

Այժմ անդրադառնանք հրապարակվող բնագրին: Նշենք, որ մատչելի Սամվել Անեցու ժամանակագրության հարվածում եղել են բազմաթիվ պակասող թերթեր, որոնք նոր մագաղաթա և թղթա թերթերով լրացրել են 1747 թ. նորոգման ժամանակ¹⁷: Փաստորեն, ժամանակագրութիւնից դուրս են մնացել այն տեղեկութիւնները, որոնք եղել են սկզբնական մատչելի կորած թերթերի վրա¹⁸: Մի շարք տեղերում (1078, 1204, 1250, 1268 թվականների դիմաց) արվել են հավելումներ այլ ձեռքով, բայց դրանք հավանաբար հեռու չեն գրչության ժամանակից (ծանոթագրութիւններում հեղինակին պայմանականորեն անվանում ենք առաջին խմբագրող): Ժամանակագրության բնագիրը որոշ տեղերում միջամտության է ենթարկվել նաև ԺԹ դարում¹⁹:

Մ1898 ձեռագիրը թեև Սամվել Անեցու ժամանակագրության 1893 թ. վաղաքաղապարյան հրապարակութիւնը պարբերաբար Ա. Տեր-Միքելյանի ձեռքին է եղել (13 մատչելիների թվում համարել է Ա օրինակ)²⁰, սակայն նա այս մատչելիում եղած

16 «Տեսնել Միխայելի պարբերաբար Ասորուց ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1870, էջ 312:

17 Ձեռագիրը սրացել է Նակոբ Եպիսկոպոս Ծամախեցին, իսկ նորոգման մասին հիշատակարանում գրված է. «Անրաքին նորոգեալ կազմեցաւ գիրքս և գրեցաւ յիշատակարանս ի ՌՅՂ և Ջ (1747)» (թերթ 280բ):

18 Դրանք ներառում են հետևյալ թվականները՝ 21-140 թթ (թերթ 33-38), 161-320 թթ. (թերթ 40-47), 381-420 թթ. (թերթ 51-52), 521-600 թթ. (թերթ 58-61), 681-760 թթ. (թերթ 66-69), 781-820 թթ. (թերթ 71-72), 861-920 թթ. (թերթ 75-77), 1021-1060 թթ. (թերթ 83-84), 1161-1180 թթ. (թերթ 90): Բարեբախտաբար Մ1898 մատչելի (կամ նրանից կտրված մի ընդօրինակություն) նախօրինակ է ծառայել Մարտինադարանի թ. 2965 ձեռագրի համար: Այն ժ: դ. ձեռագիր է, որի անսնունդ գրիչը ժամանակագրության մեջ Նայոց թվականի ընդունման հարվածում ծանոթագրել է. «Յայլ օրինակս զՆայոց թուականն ի Քրիստոսի ՇԾԱ (551) ամէն էր սկսեալ» (թերթ 86բ): Դա հենց Մ1898 ձեռագրի (Ներում Կոռնիկոսցու) սկզբունքն է, որ Փրկչական և Նայոց թվականները ներդաշնակեցված են (ունեն 551 տարվա տարբերություն և ոչ 553-ի): Մենք փորձել ենք այդ ձեռագրի 1021-1060 և 1161-1180 թթ. հարվածներում եղած այլ նյութերի (Սամվել Անեցու բուն ժամանակագրության և հետագա հավելումների) շարքում գտնել Մ1898 ձեռագրից ծագող տեղեկությունները: Նավանորեն այդպիսիք են 1029, 1163, 1169 թվականների դիմաց նշված միավորները, որոնք նույնպէս մոծել ենք բնագրի մեջ:

19 Մատչելի սկզբում, տարբեր էջերում և վերջում մի շարք ընդմիջարկություններ և անհարկի գրառումներ է կտրվել Մեսրոպ արքեպս. Մմբարյանցը (1833-1911): Սամվել Անեցու ժամանակագրության ամենավերջում 1300 թվականի դիմաց նա ավելացրել է. «Գրիգոր Է. Անուարգեցի Կաթողիկոս» և «Ներում Բ թագաւոր Նայոց վերաբին» (96բ): Մատչելի վերջում նույն գրով հիշատակարան է թողել. «Ով ընթերցողը յիշէր... զմիաբան Սրբոյ Էջմիածնի ի 1850 ամէ, զՄեսրոպ Եպիսկոպոս Մմբարեանց Նախիջևանցի, որ յառաջ երկից կաթողիկոսացն՝ Ե Ներսիսի, Ա Մարթնոսի և Դ Գեորգայ» (280բ): Քանի որ Մ. Մմբարյանցը վերջինը նշում է Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցուն (1866-1882), հետևաբար իր միջամտությունները արել է մինչև նրա մահը: Նրա մի քանի ընդմիջարկության մասին նշել ենք հրապարակվող բնագրի ծանոթագրութիւններում:

20 «Սամուելի քահանայի Անեցոյ Նաւարմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիրքի ժամանակաց անցեղոց

տարբերություններն ու հավելումները պողպատե քարե շինությունների և շինությունների մի խումբ քաղվածքային հրապարակել է Լ. Տեր-Պետրոսյանը (25 միավոր՝ 1074-1289 թթ. ժամանակահատվածից)²¹, իսկ մնացածների մի մասը (33 միավոր 1063-1268 թթ. ժամանակահատվածից) հրապարակվել ենք մենք, հեղինակին պայմանականորեն անվանելով Անանուն Կիլիկիցի (13-րդ դ.), նկարի ունենալով նրա հայտնի քաղաքների և շինությունների բնույթը և ողջ ձեռագրի պարունակությունը²²: Այս և մի շարք անտիկ միավորները մեկտեղելով ստորև ներկայացնում ենք Ներքին Կոմիտեի ցուցումով Վասիլ դպիրի ձեռքով Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ արված հավելումները, որպես մանր ժամանակագրությունների կարգին պարկանող մի բնագիր:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԲՆԱԳԻՐ

Փրկչական թվ.	Նայոց թվ.	
Ա 1		Յայսմ ամի եղե ծնունդն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ և մոգուցն գալն յերկրպագութիւն և ընծայիլն ի տաճարն և գնալն յԵգիպտոս ¹ :
Գ 2		Ներովդէս գմանցունսն Բեթղէմի կոտորեաց, որ էր թիւ նոցա հարիւր և քառասուն և չորս հազար ² :
Դ 4		Յոհաննէս աւետարանիչն ծնանի ի ծնողաց իւրոց ³ :
Ը 8		Ընգեցաւ յիշխանութենէն Երուսաղէմի վասն խաբութեան բարոց իւրոյ Արքեղայոս ⁴ :
ԺԲ 12		Եկաց Յիսուս Քրիստոս Երուսաղէմ և անմենեքեան զարմանային ընդ իմաստութեան նորա, զի ամենեցուն տայր պարասխանի ⁵ :
ՆԿ 460		Բ ժողովն Եփեսոսի վասն Փլավիանոսի և Եսփիքի ⁶
ՈԻԱ 621	Ն	Յայսմ ամի յայտնեցաւ Մահմէտ առաջնորդն Տաճկաց, ուսրի և սկսանի թուականն Տաճկաց ⁷ :
ՈԱԼ 1029	ՆՆԷ	Եղեւ պարբերազմ մօտ ի Սուրբ Պետրոս, զոր Զաւլն արար ⁸ :
ՌԿԳ 1063	ՇԺԲ	Վախճանեցաւ Տաղրիլ սուլտանն Խորասանա և փրեաց Ալիսալանն ⁹ :
ՌԿԴ 1064	ՇԺԳ	Ալիսալանն էաւ զԱնի:
ՌԿԵ 1065	ՇԺԴ	Ալիսալանն առաքեաց զՍուլիման ¹⁰ քուրդորդին իւր յաշխարհն Նոռոնոց և Նայոց ընդ դէմ Յունաց: Յայսմ ամի Գագիկ դարձեալ ի Կոստանդնուպոլսէ, եսպան գմերրապալիսն Կիսարոյ:
ՌԿԶ 1067	ՇԺԶ	Կաթողիկոս եկաց Նայոց Տէր Գրիգորիս Վահրամն, որ կոչեցաւ Վկայասէր, ամս ԺԶ (16):

մինչև ի ներկայ ծայրաքաղ արարեալ», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով և ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ Է (այսուհետեւ՝ Անեցի):

21 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Եր., 2005, հավելված 2 (Սամուել Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը), էջ 483-484:

22 Տե՛ս Գ. Մաթևոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 114-120:

ՌՆ 1070	ՇԺԹ	Դեաժենն ¹¹ եկն յարեւելս եւ էառ զՄանձկերս ի թուրքաց, եւ Ալիսալանն պարերազմեալ յաղթեաց նմա եւ կալաւ զնա եւ դարձեալ ազաւրեաց ուխտադրութեամբ ¹² : Ոմանք զկոտորիկն Դիաժենին ի թու. Նայոց ՇԺԸ (1069) եւն գրեալ ¹³ : Եւ ի ՇԺԹ (1070) Գողձախմարն ¹⁴ աներեաց զՄե լեառն ¹⁵ եւ կոտորեաց զնա Գրիգոր Պիխարն ¹⁶ ի դաշտն Նարունոյն ի մամ-խենուսն ¹⁷ :
ՌՆԱ 1071	ՇԻ	Եղև սով սասարիկ եւ Կումիշպիկին ¹⁸ եկն յՈւռնա եւ կոտորեաց զհոռոնց զարսն:
ՌՆԲ 1072	ՇԻԱ	զՊիխարն յԱնդրիոնն խեղդեցին ծառայք իւր ¹⁹ :
ՌՆԳ 1073	ՇԻԲ	Մեռաւ Ալիսալանն եւ եկաց սուլտան Խորասանա որդի նորա Մելէք-շահն, այր քաղցր եւ իմաստուն:
ՌՆԴ 1074	ՇԻԳ	Թագաւորն Նայոց Գագիկ սալանաւ ի Կենդասկոսի՝ յորդոցն Մանրալէի ²⁰ :
ՌՆԵ 1077	ՇԻԶ	Մեռաւ Ապղարիալ ²¹ իշխանաց իշխանն՝ Նասանայ որդին, եւ թաղեցաւ ի Պապեռանն:
ՌՆԹ 1078	ՇԻԷ	Կալաւ զիշխանութիւն Նայոց Ռոբէն Մեծն՝ ազգական թագաւորին Նայոց Գագիկայ, կացեալ ամս ²² :
ՌՁԳ 1083	ՇԼԲ	Թագաւորեաց Յունաց Ալէքսն ամս ԼԸ (39): Ի սորա ատուրս շարժեցաւ բասաճն Փռանկաց ²³ :
ՌՁԷ 1087	ՇԼԶ	Եկն սուլտանն Խորասանա Մելէքշահն եւ առ զԱնրիոք եւ զԿիլիկիա, եւ զՖիլաւորոսն ²⁴ քաճկցոյց, քալով նմա զՄարաշ: Եսր եւ զՆալալ Ախանդո-րին եւ զՈւռնա՝ Բուզանին եւ զԱնրաք՝ Էլիսանին եւ ինքն գնաց ի Խորա-սան ²⁵ :
ՌՂԲ 1092	ՇԽԱ	Մեռաւ սուլտանն Մելէքշահ եւ եկաց որդի նորա Պէկիարուխն ²⁶ , յաւուրս սորա պառակտեցաւ իշխանութիւն թուրքաց ի բազում մասունս, եւ ի գալ բասաճին, սա էր սուլտան ի Պարսս թուրք գոյ ազգաւ:
ՌՂԶ 1096	ՇԽԵ	Շարժեաց Ասպուած զմեծ բասաճն Փռանկաց գալ ի թափումն Երուսա-ղէմի ²⁷ :
ՌՂԷ 1097	ՇԽԶ	Բասաճն էառ զՆիկիա ի Սուլիման շահէն:
ՌՂԸ 1098	ՇԽԷ	Պարոն եկաց Նայոց՝ յաշխարհն Կիլիկեցոց, Կոստանսպին որդի Ռովբէնա՝ ամս Ե (5) ²⁸ : Բասաճն էառ զԱնրիոք եւ զՈւռնա:
ՌՂԹ 1099	ՇԽԸ	Եղև թափումն Երուսաղէմի եւ քուկն Գունդաւֆրէ ²⁹ քիբեաց Երուսաղէ-մի:
ՌՃ 1100	ՇԽԹ	Վախճանեցաւ Գունդաւֆրէ եւ պսակեցաւ առաջին թագաւոր Երուսաղէ-մի Պաղպին ³⁰ եղբայր նորա, առաջին կոմսն Ուռնայոյ:
ՌՃԳ 1103	ՇԾԲ	Պարոն եկաց Նայոց Թորոս՝ անպրանիկ որդին Կոստանսպէն՝ ամս ԻԶ (26) ³¹ :
ՌՃԻԱ 1121	ՇՆ	Թագաւորեաց Յունաց Յովհաննէս Պարֆիրաւժենն ամս ԺԳ (13) ³² : Սա էր որդի Ալէքսին:
ՌՃԻԶ 1126	ՇՆԵ	Կայսր եկաց Նոմայեցոց Կլաւդայրն ամս Թ (9):
ՌՃԻԹ 1129	ՇՆԸ	Պարոն եկաց Նայոց Լեւոն որդի Կոստանսպէն եւ եղբայր Թորոսի՝ ամս Դ (4) ³³ :
ՌՃԼԳ 1133	ՇՁԲ	Կայսրն Յունաց կալաւ զպարոն Նայոց Լեւոն, եւ դարձեալ քիբեցին Կիլիկիոյ Յոյնք՝ ամս ԺԱ (11) ³⁴ :
ՌՃԼԴ 1134	ՇՁԳ	Թագաւորեաց Յունաց Մանուիլ որդի Պարֆիրաւժենին ամս ԽԶ (46):
ՌՃԼԵ 1135	ՇՁԴ	Կայսր եկաց Նոմայեցոց Բուռաթ երկրորդն ամս Ա (1):

ՌՃԼԶ 1136	ՇՁԵ	Կայսր եկաց Նոմայեցոց Ֆրարիկն ամս Ժ (10):
ՌՃՆԴ 1144	ՇՂԳ	Պարոն եկաց Նայոց ի Կիլիկիա Թորոս որդի Լեոնի, գերծեալ ի բանսին Կոստանդինուպոլսու՝ ամս ԺԳ (13) ³⁵ :
ՌՃՆԶ 1146	ՇՂԵ	Կայսր եկաց Նոմայեցոց Նեփ Ե (5)-երորդն ամս Ե (5):
ՌՃԾԱ 1151	Ո	Կայսր եկաց Նոմայեցոց Ֆրարիկն, որ խեղդեցաւ ի գետն Սելեկիոյ, ամս ԼԹ (39):
ՌՃԾԷ 1157	ՈԶ	Պարոն եկաց Նայոց Սյեհ, եղբայր Թորոսի՝ ամս Է (7):
ՌՃԿԵ 1163	ՈԺԲ	Թագաւորն Երուսաղէմի Ամառի գնաց յԵգիպտոս եւ Էառ զՍքանարիս եւ զՊլալս ³⁶ :
ՌՃԿԹ 1169	ՈԺԸ	Առին զՊլինաս անօրէնքն ի քրիստոնէից եւ շինեցաւ վանքն Վալմունդ ³⁷ :
ՌՃԶԶ 1186	ՈԼԵ	Պարոն եկաց Նայոց Լեոն, եղբայր Ռովբէնի եւ որդի Սրեֆանէի՝ ամս ԺԱ (11) ³⁸ :
ՌՃՂ 1190	ՈԼԹ	Կայսր եկաց Նոմայեցոց Նեփ որդի Ֆրարիկն ամս Թ (9):
ՌՃՂԶ 1196	ՈԽԵ	Կաթողիկոս եկաց Նայոց քեր Գրիգորիս Տղայն ամ Ա (1) ³⁹ :
ՌՃՂԷ 1197	ՈԽԶ	Պարոն Նայոց Լեոն պսակեցաւ թագի եւ եկաց առաջին թագաւոր ի Կիլիկիա՝ ամս ԻԴ (24): Կաթողիկոս եկաց Նայոց քեր Գրիգորէս Ապիրարն ամս Է (7):
ՌՄԳ 1203	ՈԾԲ	Կաթողիկոս եկաց Նայոց քեր Յոհաննէս ամս ԺԸ (19):
ՌՄԴ 1204	ՈԾԳ	Կայսր եկաց ի Ֆռանկոնյն Կոստանդինուպոլսոյ Պադրիկն ⁴⁰ առաջին կացուցեալ գնա Գունթը քը ֆլանսրն ⁴¹ եւ քունկ Վնէժու, որ առին գնա կացեալ ամս ⁴² :
ՌՄԷ 1207	ՈԾԶ	Կայսր եկաց Նոմայեցոց Արունն ծնեալ ի Սաքսոնաց, որ եւ հակառակ եկաց եկեղեցոյ, ամս Թ (9):
ՌՄԺԶ 1216	ՈԿԵ	Կայսր եկաց Նոմայեցոց Ֆրարիկն ⁴³ , որ յերոյ բանադրեցաւ եւ աքսորեցաւ ի ժառանգութենէ, ամս:
ՌՄԻԱ 1221	ՈՏ	Թագաւորեաց Նայոց Ֆիլիպ, որդի Կոյր Բրընծին՝ ամս Ե (5) ⁴⁴ : Կաթողիկոս եկաց Նայոց քեր Կոստանդին Բարձրբերդցին ամս ԽԷ (47):
ՌՄԻԶ 1226	ՈՏԵ	Թագաւորեաց Նայոց Նեթում, որդի Կոստանդինա աւագ պարոնին Նայոց՝ ամս ԽԵ (45) ⁴⁵ :
ՌՄԽԲ 1242	ՈՂԱ	Կլիմցիք արմրերն գողցան զՊռականա ⁴⁶ ի թուրքէն:
ՌՄԽԴ 1244	ՈՂԳ	Խորագմիք մարան յերկիրն Երուսաղէմի եւ խանգրեցին զՍելիցիք ⁴⁷ :
ՌՄԽԵ 1245	ՈՂԴ	Նոռ(ո)մաց հեծելն սղարեցին զՏարսուս եւ թագաւորն Նեթում եւր զՊռականա եւ արար հաշտութիւն ⁴⁸ : Ինասանդ պապն բանադրեալ եհան ի ժառանգութենէ զՖրարիկ ընթրուն ⁴⁹ :
ՌՄԽԶ 1246	ՈՂԵ	Պարոն Սմբապ՝ զանարուստալն Նայոց, գնաց ի Կիուկ խանն: Թագաւորեաց Կիպրոսի Նեփ գէրն ⁵⁰ :
ՌՄԽԷ 1247	ՈՂԶ	Մարցիք առին ի Ֆռանկոնյն զՏապարի եւ զԱսխալան:
ՌՄԽԸ 1248	ՈՂԷ	Լաիզ ըռէ քը Ֆրանցն ⁵¹ եկն զաւրաք ի Կիպրոս:

ՌՄԽԹ-1249	ՌՂԸ	Ըճէ փը ֆրանցն էաւ զՏամիաթ:
ՌՄԾ 1250	ՌՂԹ	զԸճէ փը ֆրանցն կալան Մարցիք եւ առեալ գին զՏամիաթն եւ ճՌ (100 000) մարկ արծաթ ազարեցին զնա ⁵² : Կայսր եկաց Ղոնմա Կիլամ փը Նալանդն ի յԱլամնաց, կացեալ ամս ⁵³ :
ՌՄԾԱ 1251	Չ	Սիր Նալկամն գողացաւ զՊռականա ի Թուրքն, եւ ի սոյն գիշերն առին եւ զՆորբերդ յանարիկնաց փութութեամբ ⁵⁴ : Բրինձ եկաց Անուաթը Պեմունդ գերբորդն:
ՌՄԾԲ 1252	ՉԱ	Վախճանեցաւ թագուհին Նայոց Զապէլ: Ըճէ փը ֆրանցն շինեաց զՃաֆն, եւ ճուլիան՝ Սայիպոյ փերն՝ էաւ կին զՖիմի դուստր թագաւորին Նայոց Նեթմոյ ⁵⁵ :
ՌՄԾԳ 1253	ՉԲ	Թագաւորն Նայոց Նեթմոյ գնաց ի Մանկո խանն, եւ դուստր նորա Մալի եղեւ կին Պեմունդ բրնձին Անուիթա:
ՌՄԾԴ 1254	ՉԳ	Յայրենեցան Աղաճարիքն եւ Իսլամպակն ⁵⁶ : Ըճէ փը ֆրանցն դարձաւ իւր աշխարին: Վախճանեցաւ Քուռաթ ⁵⁷ որդի ընթրուրին:
ՌՄԾԶ 1256	ՉԵ	Թագաւորն Նայոց Նեթմոյ եկն ի Մանկո խանն, եւ արշաւեաց ի Մուշանլիքն, եւ ձիաւորեցոյց զԼեւոն որդի իւր ⁵⁸ :
ՌՄԾԸ 1258	ՉԷ	Վախճանեցաւ թագաւորեղբայրն Նայոց պարոն Լեւոն՝ մարաջախոյն Նայոց: Նուլայոն խանն էաւ զԱլամուդ ի Նաշիշեցն եւ զՊաղպար ի խալիֆայէն ⁵⁹ :
ՌՄԾԹ 1259	ՉԸ	Նեթմոյ թագաւորն գնաց ի Տրապալիս, եւ ձիաւորեցոյց զորդին իւր զպարոն Թորոս, եւ առին զՄունդաս եւ խանգրեցին զԹուրքն, որ սղարեց զՄունդաս ⁶⁰ :
ՌՄԿ 1260	ՉԹ	Նուլայոնն էաւ զՆալալ եւ փիթեաց Շամպուն ⁶¹ եւ ի սոյն ամի Մարցիք խանգրեցին զՔիթ Պաղայն եւ սպանին զԽուրթուզ սուլտանն Մարա, եւ եկաց Պնուրիսպարն ⁶² : Նեթմոյ թագաւորն գնաց ի յԱլմն, հեւր Ալիճախին: Ճուլիան Սայիպոյ փերն ծախեց Դամիլուն ⁶³ զՍայիլիլ եւ զՊիաֆարդն: Թուրքմանքն բռնեցին զՊերուպայ փերն:
ՌՄԿԱ 1261	ՉԺ	Նեթմոյ թագաւորն Նայոց փեսայացոյց զԿոստանլիքն որդի փեսան Սարվանդիքարին ի դուստր իւր Ռիթա: Եւ ի սոյն ամի մեռաւ Ճաւֆրի՝ փերն Սարվանդիքարին ⁶⁴ : Պեկիան Արսուֆին փերն ծախեց զԱրսուֆն Ոսպեթլուն ⁶⁵ : Վախճանեցաւ թագուհին Կիպրոսի Բլաժանսն եւ եղեւ պալլ Կիպրոսի Ոյկ փը Լըզինայն ⁶⁶ : Պալիսպալն էաւ զԿոստանլիքնուպալիս ի Ֆռանգնոյն ⁶⁷ :
ՌՄԿԸ 1268	ՉԺԷ	Պնուրիսպար սուլտանն Մարալ էաւ զԱնուաթ ի քրիստոնեաց, որ է ի բասաճին առնելոյն մինչեւ ասար ՃԿԶ (166) ամ ⁶⁸ : Կաթողիկոս եկաց Նայոց փեր Յակոբ վարդապետն ամս ԺԹ (19) ⁶⁹ :
ՌՄՆԱ 1271	ՉԻ	Թագաւորեաց Նայոց Լեւոն, որդի Նեթմոյ՝ ամս ԺԸ (19) ⁷⁰ :
ՌՄՁԹ 1289	ՉԼԸ	Վախճանեցաւ թագաւորն Նայոց Լեւոն եւ եկաց պարոն Նայոց անդրանիկ որդի նորա Նեթմոյ՝ ամս ⁷¹ :
ՌՄՂԴ 1294	ՉԽԳ	Պալ եկաց ի Ղոն Սէլէսպիկոս Ե (5)-երբորդ, այր կրաւնատր կացեալ ամիսս Զ (6) եւ հրաժարեաց: Եւ Պաւնաւֆանց Ը (8)-երբորդ, ամս ⁷² :

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Սամվել Անեցու երկում 1 թվականի դիմաց գրված է. «Յիսուս Քրիստոս ի Բեղլէն ծնանի» (Անեցի, էջ 52), իսկ Ներում Կոռիկոսցու թարգմանած «Պապմութիւն խրոնիկոնին» (ՊԽ) ժամանակագրության 1 թվականի դիմաց կարդում ենք. «Յառաջին ամի ծնընդեանն Քրիստոսի եղև զալ մոգուցն յերկրպագութիւն, և ընծայիլն Տեառն ի քաճարն, և զնալն յԵգիպտոս» (ՄԺ, հ. 2, էջ 37):

2 Գործում՝ «Ներովդ ևս զմանկունս կոպորեաց, որ էր թիւ նոցա ՃԽԴ (144) հազարս» (Մ1898, 123ա): Այս ևս հաջորդ չորս վկայությունները դուրս են թողնված «Պապմութիւն խրոնիկոնին» գործի՝ «Մանր ժամանակագրություններում» կապարված հրապարակությունից, ուստի հղումը արվում է ըստ Մ1898 ձեռագրի:

3 «Պապմութիւն խրոնիկոնին» գործում կա մեկ բառի տարբերություն՝ «ծնալ» (Մ1898, 123ա):

4 «Պապմութիւն խրոնիկոնին»՝ «Արքեպայոս ընկեցալ յիշխանութենէն Երուսաղէմի վասն խաղապրութեան իւրոյ» (Մ1898, 123ա):

5 «Պապմութիւն խրոնիկոնին» գործից բաղված է բառացի (Մ1898, 123ա):

6 Տեղեկությունը Սամվել Անեցու գրքում ՆԿԲ (462) թվականի դիմաց հերոյալ կերպ է. «Դարձեալ վասն Փղաբիանոսի Բ ժողովն յԵփեսոս» (Անեցի, էջ 70): Եփեսոսի Բ ժողովը արեղի է ունեցել 449 թ. օգոստոսի 8-ին:

7 Մուհամմեդը (մոտ 570-632) հալածանքների պատճառով իր հետևորդների հետ փախել է Մեքքայից ևս 622 թ. սեպտեմբերի 21-ին հասել Մեդինա: Այդ իրադարձությունը կոչվել է «Նիջրա», որը հետագայում մահմեդականները համարելով դարակազմիկ իրադարձություն՝ իրենց քարեգլուխը սկսել են հաշվել 622 թ. սեպտեմբերի 22-ից:

8 Բաղված է Մ2965 ձեռագրից, ծագում է Ներում Կոռիկոսցու «Պապմութիւն խրոնիկոնին» գործից՝ «ՈւլԱ (1031) Եղև պարերազմ մաւր ի սուրբ Պերոս, գոր Ջառլն արար» (ՄԺ, հ.1, էջ):

9 Տողրիլ, սելջուկյան սուլթան (1055-1063), Ալփի Աբսլան (Ալփասլան) սելջուկյան սուլթան (1063-1072):

10 Սուլեյման Ա, հերազայում Ռումի (Բկոնիայի) սելջուկյան սուլթան (1077-1086):

11 Բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը (1067-1071):

12 Մարենադարանի թիվ 2965 ձեռագրում ժամանակագրական տվյալ միավորը ավարտվում է «ուխրադրութեամբ հարկին» բառերով (104ա):

13 Ճակարամարտի համար 1069 թվականն է հայրենում Անանուն Եղեսացին (Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982, էջ 29-30):

14 Ձեռագրում գրված է «գողձախմարն»: Կարծում ենք, օտարառնուց անվան աղավաղված ձև է: Նուրավոր է նաև, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպես որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ շարունակությունը կարող է լինել Ահմար անվանը մոտ հնչյունավորված մի անուն:

15 Սեւ լեռը կամ Ամանոսի լեռնաշղթան Կիլիկիայի արևելքում է, ուր այդ ժամանակ կային հայկական վանքեր և հայ բնակչություն:

16 ԺԱ դարի քաղկեդոնականություն ընդունած շիրակացի հայ իշխան, որի անունը հայ պատմիչները չեն պահպանել, այլ նշում են միայն նրա պաշտոնից ծագող մականունը՝ «Պեխար», «Նալիսար» (Մարթնոս Ուռեայեցի) «Բեխար» (Վարդան Արևելցի): Փաստորեն, ներկա բնագրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանին ու մականվանը՝ Գրիգոր Պիլիսար: Մ. Չամչյանն այս իշխանին նույնացրել է Անարիտքի դուքս Խաչատուրի հետ, մի տեսակետ, որը բավականին պարածվել է (Մ. Չամչյան, Նայոց Պարմություն, հ. Բ, Եր., 1984, էջ 972, տե՛ս նաև Ն. Աճառյան, Նայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 468, Ե. Քասունի, ԺԱ դարում Անարիտքի հայ կառավարիչներ Պեխար-Խաչատուր և Վասակ Պախլավունի, «Նայկագեան հայագիտական հանդես», 1971, հ. Բ, էջ 123-133): Գրիգոր Պիլիսարի և Անարիտքի դուքս Խաչատուրի կենսագրություններն այնքան ընդհանրություններ ունեն, որ դժվար է նրանց պարբեր մարդիկ համարել: Նավանական է, որ շիրակացի իշխանը Խաչատուր անունը սրացել է քաղկեդոնական դառնալով՝ կրկնամկրպության ժամանակ (հարցի հանգամանակից բնությունը տե՛ս Կ. Մաթևոսյան, Գրիգոր Պիլիսար Շիրակացի, «Էջմիածին», 2009, Ժ, էջ 95-105): Այս ուշագրավ հայտնաբերում է Ներսիս Մոռիկոսցու մյուս գործերում:

17 Նարունի, Նարունի բերդավանը գտնվում է Սարվանդիբարից հյուսիս, Մարաշից հարավ (Մարի-Աննա Շեռալիե, Կիլիկյան Նայասարանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պարմությունից, Եր., 2007, էջ 25, 33, 35, 50), այսպես կոչված Եղած լիճի նաև համանուն դաշտը: Նեղինակը նաև ճշտել է կովի տեղը՝ «ի մամխնուսին», որ հավանաբար նշանակում է մամխենի (փշոտ վայրի սալերենի) ծառերով փրկված, ինչպես, օրինակ, եղեգնուտ:

18 Գիմիշլուգին իբն Դանիշմանդ (Իբն Ալ-Ասիր, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981, էջ էջ 231):

19 Անդրիան բերդը գտնվում է Մարաշի մոտ:

20 Գագիկ Բ Բագրատունու (1043-1045) սպանությամբ գրականության մեջ նշվում է պարբեր թվականներով՝ 1071, 1073, 1076, 1079 (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 63): Սամվել Անեցու Ժամանակագրության պարբեր շարունակողներ նշում են 1078 (Մ3681), 1076 կամ 1081 թվականները (Մ1486, Մ1899):

21 Այլդարիպ Արծրունի՝ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ 1072-ից:

22 Մ1898 ձեռագրում այս և երեք ուրիշ ժամանակագրական միավորներ (1204, 1250 և 1268 թթ.) ավելացված են այլ գրչությամբ, որոնց հեղինակին անվանում ենք առաջին խմբագրող: Վերջինս Ռուբենի տարիների թիվը չի նշել: Այդ երեսում է նաև Մ2965 ձեռագրի (որի նախօրինակներից մեկը եղել է Մ1898 ձեռագիրը) համապատասխան հայտնաբերում, ուր «ամս» բառից հետո թիվ չկա (թերթ 105ա): Մ1898 մատյանում տարիների թիվը՝ ԺԵ (15) ավելացված է այլ միջամտություններից հայտնի ձեռագրով, որը պարզապես է Մեսրոպ Մմբարյանցին:

23 «Բասաճ» նշանակում է «անցում» (լատ.), կիրառվել է խորհրդանշելով խաչակրաց արշավանքը:

24 Փիլարպոս Վարաժնունի, Ասորիքում և Կիլիկիայում սրեղծված հայկական իշխանության հիմնադիր (1070-ական թթ. - 1086 թ.):

25 Սամվել Անեցու Ժամանակագրության այլ օրինակներում այս մասին ասվում է. «Եկն ի Խորասանայ Մելիքշահ Սուլթանն և Էառ զԱնուրաք՝ զՖիլառոսն քաճկացոյց յիւր կամաց և եր նմա զՄարաշ և կոխեալ երիվարան ի ծովն՝ և եր շուրբ Ասորւծոյ որ քիբեաց խաղաղութեամբ ի ծովէն Պարսից մինչև ի ծովն արեւմտից. և ձուկն խորովեալ եկեր և զթորն կապեալ ի ծովն քնկեց՝ և դարձաւ յԱնուրիոք և եր զԱնուրիոք Էլիսանին, և զՆալպաղսն Կոյրին և զՈւռհայ Բողանին և ինքն ի Խորասան գնաց» (Անեցի, էջ 118):

26 Պարկիարուխ - Ռուբենոդին Բարք-Յարուկ, սելջուկյան սուլթան (1094-1105):

27 Նմնր. Ներթում Կոռիկոսցու ժամանակագրությունը՝ «ՇԽԵ (1096) շարժեաց Ասորւած գմն՝ բասաճն Ֆռանկաց գալ ի թափումն յԵրուսաղեմի...» Այս և հաջորդ երեք վկայությունները՝ հմմտ. ՄԺ, հ.1, էջ 74:

28 Կոստանդին Ա-ի իշխանության սկիզբը քաբբեր աղբյուրներում նշվում է՝ 1093, 1095, 1097 թթ. (յուն L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 76):

29 Գողթրուա Բուլոյնացի, Երուսաղեմի խաչակրաց պետության հիմնադիր (1199-1200):

30 Բաղդուին՝ Եղեսիայի կոմս (1198-1200), Երուսաղեմի թագավոր (1200-1218):

31 Կիլիկիո իշխան Թորոս Ա, մոտ՝ 1100-1129 թթ. (L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 88):

32 Բյուզանդական կայսր Նովիանոս Բ Կոմնենոսի (1118-1143) անունը հայկական աղբյուրներում հիշվում է Պերփեոթան, Պերփեոթեն և նման այլ ձևերով: Սամվել Անեցին նրա գահակալության սկիզբը ճիշտ է նշել՝ Նայոց ՇԿԷ (1118):

33 Կիլիկիո իշխան Լևոն Ա (1129-1137), հմմտ. ՄԺ, հ.1, էջ 75:

34 Դեպքը եղել է 1137 թ., որը ճիշտ է նշված Ներթում Կոռիկոսցու Ժամանակագրության մեջ. «ՇՁԶ (1137) Թագաւորն Յունաց ՊարֆիրաւԷն Էառ զԿիլիկիեայ ի պարոն Լեւոնէ և զԼեւոն հանդերձ որդարն առաքեաց կապանաւք ի Կոստանդնուպոլիս, որ և անդ մեռաւ» («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 95): Բայց Սամվել Անեցու Ժամանակագրության մեկ այլ լրացնող եւս այն դնում է ավելի վաղ թվականով՝ «Ի ՇՁԱ (1132) ամին ել Պերփեոթեն և Էառ զԿիլիկիայ... և զԼեւոնն՝ կնաւ և Բ (2) որդուվք Թորոսի և Ռուբենի կապեաց և առաքեաց ի Կոստանդնուպոլիս...» (Անեցի, էջ 130)

35 Կիլիկիո իշխան Թորոս Բ (1145-1168):

36 Քաղված է Մ2965 ձեռագրից, ժամանակագրությունը խախտված է, ծագում է Ներթում Կոռիկոսցու ժամանակագրությունից. «ՌԺԶ (1167) Ամառի թագաւորն յԵրուսաղեմի Էառ զՍքանարարիայ և զՊլպէս» (Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին, էջ 95):

37 Քաղված է Մ2965 ձեռագրից, ծագում է Ներթում Կոռիկոսցու «Պարմութին խրոնիկոնին» գործից. «ՌՃԿԹ (1169) Առին զՊլինաս անարեւնքն ի քրիստոնէից և շինեցաւ վանքն, որ կոչի Վարմունդ»: (ՄԺ, հ. 2, էջ 59):

38 Լեւոն Բ՝ խնամակալ իշխան՝ 1187-1198 թթ. (L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 164): Լեւոնի իշխանության սկիզբը ՈԼԵ (1186) թվականին է նշված նաև Ներթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 95):

39 Գրիգոր Ե Քարավեժը (1193-1194) «Տղա» մականունով է կոչվել երիտասարդ տարիքում աթոռակալելու պարճառով:

40 Կոստանդնուպոլսի առաջին լատին կայսր Բաղդուին Ա (1204-1206):

41 Այսինքն՝ Ֆլանդրիայի կոմսը և Վենետիկի դուքսը:

42 Նմմր. «Ներում Կոռիկոսցու ժամանակագրությունը» («Մանր Ժամանակագրություններ», հ. 1, էջ 78) և Ներում Նղիրցու ժամանակագրությունը (**Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 539): Սա առաջին խմբագրողի երկրորդ միջամտությունն է:

43 Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ (1212-1250):

44 Նայոց թագավոր Փիլիպոս (Ֆիլիպ) (1222-1225):

45 Նայոց թագավոր Ներում Ա (1226-1269):

46 Բերդ Կիլիկիայում, Սելեկիայի մոտ:

47 «Մեխ» - Ասորիքի (Սիրիայի) ծովափնյա երկրամասն է:

48 «Մղարեկ» նշանակում է պաշարել (արար. փոխառություն): Այս դեպքի մասին մանրամասն գրված է Ներում Կոռիկոսցու և Ներում Նղիրցու ժամանակագրություններում (**Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 540):

49 «Ընթրուր» աղավաղված «խմպերաբոր» բառն է:

50 Կիպրոսի թագավոր Նևրի Ա (1218-1253):

51 Լյուդովիկոս Թ-ի (1226-1270) մասին է: «Ըռէ քը Ֆրանցն» (roi de France) Ֆրանսիայի թագավոր:

52 Նմմր. «Ներում Կոռիկոսցու և Ներում Նղիրցու ժամանակագրությունները» (ՄԺ, հ. 1, էջ 81, **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, էջ 540):

53 «Կայսր եկաց» բառերով սկսվող պողո առաջին խմբագրողի հավելումն է:

54 Նաքվածը բացակայում է Ներում Կոռիկոսցու գործերում:

55 Ամբողջությամբ կրկնվում է Ներում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 98):

56 Նմմր. Ներում Կոռիկոսցու Ժամանակագրությունը (Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին, էջ 98):

57 Կոնրադ Դ (1228-1254), գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի որդին:

58 Աննշան տարբերություններով կրկնված է Ներում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 98):

59 Նմմր. Ներում Կոռիկոսցու «Պարմութին խրոնիկոնին» գործը՝ «ՌՄԾԸ (1258) Նուլայուն խանն Էառ գԱլամութ և կոպորեաց գՆաշիշիքն: Եւ ի սոյն ամի Էառ Նուլայունն գՊաղպար: Եւ վախճանեցաւ թագաւոր եղբայրն Նայոց պարոն Լեոն մարաջախարն» (ՄԺ, հ. 2, էջ 70), և Ժամանակագրությունը («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 98):

60 Քաղված է Ներում Կոռիկոսցու ժամանակագրությունից, որտեղ կան հավելյալ մանրամասներ («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին», էջ 98):

61 «Շամբուն» է անվանվում Դամասկոսը:

62 Եգիպտոսի սուլթան Բայբարս ալ-Բուղուկդարի (1260-1277):

63 Դամվիլուն - Տեմպլիեր (Templiers), Տաճարականների հոգևոր-ասպետական միաբանություն: Ներում Կոռիկոսցին «Պարմութին խրոնիկոնին» գործում բազմիցս

օգտագործում է այս անվանումը, իսկ միաբանության անդամներին կոչում է «Դամվիցիք» (Մժ, հ. 2, էջ 67, 77):

64 Քաղված է Ներում Կոռիկոսցու ժամանակագրությունից («Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին», էջ 98):

65 «Ոսպերթու» (յոսպերթու) - Նոսպիտալիերս (Ordre des Hospitaliers), Նյուրնկայների հոգևոր-ասպետական միաբանություն: Ներում Կոռիկոսցին («Պարմութին խրոնիկոնին») այս միաբանության անդամներին կոչում է «Ոսպերթիք» (Մժ, հ. 2, էջ 77):

66 Նուգո դը Լուսինյան (մահ. 1267 թ.):

67 Բյուզանդական կայսր Միքայել Ը Պալեոլոգոս (1242-1258):

68 Այս հատվածը առաջին խմբագրողի չորրորդ և վերջին հավելումն է: Այն թերևս սխալ հաշվարկ է ներկայացնում, քանի որ Անտիոքը խաչակիրները գրավել են 1098 թ. և եթե դրան ավելացնենք 166 տարի, կստացվի 1264 (մինչդեռ տեղեկությունը 1268 թվականի դիմաց է գրված):

69 Նակոր Ա Կլայեցի (1268-1289):

70 Նայոց թագավոր Լևոն Գ. (1269-1289):

71 Բնագրում Ներում Բ-ի տարիների թիվը բաց է թողնված, քանի որ նա այդ ժամանակ թագավորն էր և գրչին հայտնի չէր նրա թագավորության տարիների քանակը: Ներագայում, սակայն, այդ մասում գրվել է Ե (5): Նույն նախադասության մեջ նույն ձեռագրով Լևոն թագավորի անունից հետո գրված է Գ (այսինքն՝ Լևոն 3-րդ): Սրանք Մեսրոպ Մառարյանցի ավելացրածներն են:

72 Ժամանակագրության՝ Վասիլի ձեռքով գրված վերջին նշումն է: Այսպես Հռոմի Սելեսյինոս Եպապին (1294) հաջորդած Բոնիփակիոս 8-րդի (1294-1303) տարիների քանակը չի նշված և վերջին «ամս» բառը լրացնողը գրել է հետագա ընթերցողին թողնելով տարիները նշելու գործը (պատահական չէ, որ ի տարբերություն մյուս բոլոր ժամանակագրական միավորների, այսպես վերջակետ չի դրված): Ժամանակագրության սկզբից նշված Հռոմի պապերի ցանկը սույն բնագրում չենք ներառել, քանի որ այն թերի է ձեռագրում պակասող թերթերի պարճառով և որովհետև ամբողջովին քաղված է արդեն հրատարակված «Պարմութին խրոնիկոնին» թարգմանությունից: